Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա.Նահապետյան

Digitally signed by NAHAPETYAN AREVIK 7007690092
Date: 2022.10.25 13:32:12 AMT

30/08/2022թ..

# Պատմաշխարհագրական մեթոդմիավորում
# 2022 - 2023 ուստարվա տարեկան
# աշխատանքային ծրագիր

Մեթոդմիավորման
նախագահ՝ Զ. Վարդանյան

| ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| №№ | Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյան տարեթիվը | Կրթությունը | Որակավորումը | Ստաժը | Ի՞նչ առարկա է դասավանդում | Դասավանդվող դասարանները | Շաբաթ. ժամերը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Զ. Վարդանյան | 1969 | Բարձ. | Մանկավարժություն և հոգեբանություն | 34 | Հայոց եկեղեցու պատմ. | V-IX | 10 |
| 2 | Ա. Նահապետյան | 1969 | Բարձ. | Պատմ և հասարակագիտության ուսուցչուհի | 31 | Հասարակագիտություն | VIII | 4 |
| 3 | Թ. Նաղդալյան | 1979 | Բարձ. | Պատմ ուսուցչուհի | 20 | Պատմություն | V-IX | 13 |
| 4 | Ա. Կիրակոսյան | 1977 | Բարձ. | Պատմ ուսուցչուհի | 15 | Պատմություն | V-IX | 13 |
| 5 | Կ. Հարությունյան | 1977 | Բարձ. | Աշխարհ. ուս. | 23 | Աշխարհագրություն | IV-IX | 11 |
| 6 | Ա. Սափարյան | 1972 | Բարձ. | Աշխարհ. ուս | 26 | Աշխարհագրություն | V-IX | 8 |

Նիստ 1
Օգոստոսի 31

1. Ուսուցիչների դասաբաշխումը: Մեթոդմիավորման կազմը: Պատմաշխարհագրական առարկաների մ/մ 2022-2023ուստարվ աշխատանքային պլանիներկայացում և քննարկում /զեկուցող՝ Զ. Վարդանյան/:
2. Պատմաշխարհագրական առարկաներ ծրագրերի ստուգում և հաստատում՝ըստ պետական ծրագրերի և չափորոշիչների: Դպրոցական պարտադիր բաղադրիչի բաշխում:
3. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում: Արտերկրից եկած աշակերտների անհատական առարկայան պլանների կազմում: Օրվա դասապլան:
4. Ուսումնական ծրագրեր, դասագրքեր,մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տետրեր:
5. Բանավոր հարցումները, թեմատիկ և գործնական աշխատանքները կիսամյակի ընթացքում:Բաց դասեր, մանկավարժական ընթերցումներ, զեկուցումներ:

Նիստ 2

Հոկտեմբերի 21

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում:
2. « Հասարակագիտություն» առարկայի ուսումնասիրում 8-9-րդ դասարաններում:
3. Փոխադարձ դասալսումներ և քննարկումներ
4. Զեկուցման թեմաների բաշխում առաջին և երկրորդ կիսամյակների համար:
5. Նորագույն և առաջավոր մեթոդները դպրոցում

Նիստ 3
Նոյեմբերի 17

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում:
2. «Թարգմանչաց տոն» վերնագրով պատի թերթի լույսընծայում: / Զ. Վարդանյան/
3. 2023-2024 ուստարվա նոր ծրագրերի, չափորոշիչների և դասագրքերի ուսումնասիրում և քննարկում:
4. Ուսուցչի մասնագիտական չափանիշները: Օլիմպիադայի դպրոցական փուլի նախապատրաստում, հարցաշարերի կազմում և քննարկում մ/մ անդամների կողմից:

Նիստ 4
Դեկտեմբերի 22

***1.*** 1-ին կիսամյակի աշխատանքների քննարկում և վերլուծություն:
***2.*** Փոխադարձ դասալսումներ և քննարկումներ:
***3.*** Բաց դասի կազմակերպում 6-րդ դասարանում: / ՈՒսուցիչ Թ. Նաղդալյան/
***4.*** Օլիմպիադայի արդյունքների վերլուծություն և քննարկում:
***5.*** Մեթոդմիավորման և տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների վերլուծություն:1-ին կիսամյակի թեմատիկ ծրագրերի կատարողականի ստուգում

Նիստ 5
Հունվարի 25

1. 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանների քննարկում:
2. Նախապատրաստական աշխատանքներ Բանակի օրվա կապակցությամբ:Բաց դասեր, միջոցառումներ:
3. Աշխարհագրություն ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն:
4. Բաց դասեր աշխարհագրություն ուսումնական առարկայից /Կ. Հարությունյան, Ա. Սափարյան/:
5. Օլիմպիադայի տարածքային փուլ անցած աշակերտների հետ լրացուցիչ պարապելու հանձնարարություն:

Նիստ 6

Փետրվարի 22

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկոմ:
2. Մայրենի լեզվի և Գիրք նվիրելու օրվան նվիրված աշխատանքների վերլուծություն , միջառարկայական կապ ՀԵՊ-ի հետ:
3. Մեթոդների ուսուցում. բանավեճ:
4. Աշխարհագրություն առարյաի դրվածքը 8-րդ դասարանում:
5. Փոխադարձ դասալսումներ:

Նիստ 7
Մարտի 22

1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում և քննարկում:
2. Բաց դասի կազմակերպում հայոց եկեղեցու պատմությունից /6-րդ դասարանում /Զ. Վարդանյան/
3. Դպրոց-ծնող համագործակցության ընդլայնման ուղղված միջոցառումների կազմակերպում:
4. Զեկուցում ՝«Մեզ չեն կարող ջնջել»խորագրով /Ա. Կիրակոսյան/

Նիստ 8
Ապրիլի 25

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում:
2. «Հրազդանի օդային ավազանի աղտոտումը» /զեկուցող՝ Կ. Հուրությունյան/:
3. Զրույց ՏՀՏ-ների կիրառումը պատմություն, աշխարհագրություն, հասարակագիտություն առարկաների դասաժամերին:
4. Ուսուցանող գնահատման մեթոդը:

Նիստ 9
Մայիսի 26

1. 120 ժամ և ավելի դասաժամ բացակայություն ունեցող աշակերտների քննական տարբերակների կազմում:
2. Պատմություն ուսումնական առարկայի ուսուցման որոկի ուսումնասիրություն: ՌԻսուցչի աշխատանքային գործունեության վերահսկողություն
3. Լրացուցիչ աշխատանքներ ավարտական քննություններիկապակցությամբ:
4. 2-րդ կիսամյակի ծրագրերի կատարողականի ստուգում:

Նիստ 10
Հունիսի 30

1. 2022 -2023 ուստարվա կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն:
2. Պետական ավարտական քննությունների ամփոփում:
3. Տնօրենության կողմից տրված աշխատանքների արդյունքներիամփոփում

Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում:

1. Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը.

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

2. Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

3. Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: